


ՆԱՐԵ ՇԱԼՈՒՆՑ*

ասպիրանտ

Երևանի պետական համալսարան

nare.shalunts@ysu.am

0000-0003-3606-261X 

DOI: 10.54503/1829-4073-2026.1.120-139

ԿԵՐՊԱՐԱՆԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ԱՌԱՇԱՅԻՆ ԽՈՍՈՒՅԹՈՒՄ. ՄԱՐԴԿԱՅԻՆ ԷՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԻ ԼԵՂՎԱՃԱՆԱԶՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Les apparences sont trompeuses

Արդարքինը խաբուսիկ է

Ամփոփում

Առաձային խոսույթում կերպարանափոխության լեզվաճանաչողական կաղապարը ֆրանսերեն ու հ այերեն առաձների օրինակով վերհանում է մարդկային էության բնորոշումն ու հատկանիշների ճանաչողությունը: Կենդանական աշխարհի պատկերի ու հասկացության փոխհարեությունների օգնությամբ դիտարկվում են մարդկային բնույթն ու վարքագծի կաղապարները, և այս համատեքստում ընդգծվում է կերպարանափոխության բացասական հարանշանակությունը: Վերոնշյալի հիմքը վարքագծի ու լայն իմաստով ինքնության փոփոխության հիմնահարցն է, ինչը քննվում է ինչպես գոյաբանական հարթությունում, այնպես էլ հասկացության ընկալման մակարդակում՝ լինելու և թվալու սահմանագծին: Շեշտադրվել է պատճառահետևանքայնության վերլուծությունը՝ նոր ինքնության կառուցման համատեքստում:

Հարկ է նշել, որ առաձային խոսույթն ընդգծում է մարդկային բնույթի հաստատուն լինելը, իսկ կերպարանափոխության արտաքին դրսևորումը ներքին որևէ փոփոխության չի հանգեցնում: Քննության առարկա առաձներում լեզվաճանաչողական ու լեզվաոճական դիտանկյունից վերլուծվել են

* Հոդվածը ներկայացվել է 10.03.2026, գրախոսվել է 26.03.2026, ընդունվել է տպագրության 30.04.2026:

© 2026 հեղինակ(ներ): Բաց հասանելիությամբ հոդված է՝ Creative Commons լիցենզիայի (ոչ առևտրային 4.0 միջազգային լիցենզիա) պայմաններին համապատասխան:

Կերպարանափոխությունը առաձային խոսույթում...

արտաքին ազդեցության ծախսողման, բնածին հատկությունների, վարքագծի վրա էության արտապատկերման ճանաչողական կաղապարները:

Բանալի բառեր՝ կերպարանափոխություն, առաձային խոսույթ, մարդկային էություն, կենդանուն, հասկացության փոխաբերություն, լինել, թվալ:

Ներածություն

Առաձներն ու ասացվածքները բարոյախրատական ասույթներ են, որոնք աղերսվում են էթիկային: Կենդանական աշխարհը՝ իբրև ոչ էթիկական աղբյուր՝ տիրույթ, առաձներում հիմք է դառնում կերպարանափոխության համատեքստում բարոյախրատական իմաստի կառուցարկման համար: Կենդանու պատկերի օգնությամբ մարդկային էությունն ու հատկանիշը վերացարկման հարթությունից փոխադրվում են կոնկրետի տիրույթ, և առաձային խոսույթը բնական միջավայրի պատկերի օգնությամբ վերհանում է հասարակական ոլորտում բարոյախրատական իմաստի կառուցման հայեցակերպը: Այս դիտանկյունից կենդանու՝ որպես միջնորդի դերով արտահայտվում է էության բնորոշման կամ վարքագծի կաղապար, որը, փոխադրվելով հասարակական տիրույթ, ստանում է գնահատական: Հասարակական կյանքում մարդու վարքագծի փոփոխությունը կամ էության անփոփոխությունը բացորոշվում են կենդանու պրիզմայով, ինչը թույլ է տալիս ճանաչողական-գործաբանական դաշտում փոխաբերության միջոցով քաղաքավարության շղարշ հաղորդել՝ այդպիսով խուսափելով ուղիղ քննադատությունից: Ավելին, կենդանու վարքագծի մատնանշումը ենթադրում է սուբյեկտի էության հետ ամբողջական նույնացումից խուսափում: Այս համատեքստում կենդանին դառնում է հասկացության դաշտում հայելի, որում մարդը տեսնում է իրեն՝ արդյունքում գնահատական տալով վերջինիս կերպարանափոխությանն ու վարքագծային այս կամ այն կաղապարին:

Սույն հետազոտության նպատակը *ՄԱՐԴԻԿ ԿԵՆԴԱՆԻՆԵՐ ԵՆ* հասկացության փոխաբերության համատեքստում համեմատական մեթոդի օգնությամբ ֆրանսերեն ու հայերեն առաձներում կենդանիների կերպարանափոխության լեզվաճանաչողական հայեցակերպի վերլուծությունն է առաձաբանական աղբյուրների փաստական նյութի հիման վրա¹:

¹ Ղանալայան 1960. Միրզոյան 2007. Նազարյան 1994. Refranero multilingüe

Կերպարանափոխության ճանաչողության շուրջ

Իրականության ընկալման փոխաբերական հայեցակերպն առնչվում է վերացարկման հարթությանը: Այս դիտանկյունից ցանկացած փոխաբերություն ինչ-որ առումով կերպի փոփոխություն է, այլ կերպարանքով տեսնելու ճանաչողություն՝ հասկացությային մակարդակում, իսկ ըստ Ջ. Լակոֆի և Մ. Ջոնսոնի առաջադրած փոխաբերության տեսության՝ ռացիոնալ միտքը ևս ենթադրում է փոխաբերական բնույթ:² Հեղինակները պատճառահետևանքայնությունը դիտարկում են իբրև ֆիզիկական ու հասարակական իրականության կազմակերպման միջոց. ինչպես ֆիզիկական նյութի՝ մի վիճակից մյուսին անցումը, այնպես էլ որևէ իրադարձության բխումը պատճառային շղթայից փոխակերպումներ են:³

Լեզվաբանության գիտակարգի շրջանակում կերպարանափոխությունը դիտարկվում է իբրև ռճական հնար՝ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ կերպարի փոփոխության անցումը տեղի է ունենում «փոխաբերաբար»:⁴ Լը Գեդնի պնդմամբ՝ կերպարանափոխությունն իրականանում է միայն փոխաբերության բացակայության պայմաններում, քանի որ, եթե առաջինը ենթադրում է առաջ և հետո ժամանակային ցուցիչների դրսևորում, ապա վերջինը ապաժամանակային ուղղվածություն ունի:⁵ Կերպարանափոխությունը դիտարկվել է նաև կենդանական աշխարհի պատկերի օգնությամբ երևակայության տիրույթում փոխակերպումների օրինակով:⁶

Գիտական հարացույցում մի շարք հետազոտություններ նվիրված են գրական ստեղծագործություններում կերպարանափոխության առանձնահատկություններին,⁷ այնուամենայնիվ առաձային խոսույթում կերպարանափոխության լեզվաճանաչողական քննության համակողմանի հայեցակարգը բացակայում է, և այս համատեքստում սույն հետազոտության արդիականությունն ու նորույթը նշյալ երևույթի՝ իբրև լեզվամշակութային ու լեզվաճանաչողական իրողության բովանդակ վերլուծությունն է:

² Lakoff, Johnson 1980, 193.

³ Lakoff, Johnson 1980, 69.

⁴ Mikkenon 1996.

⁵ Le Guern 1981.

⁶ Bachelard 1939.

⁷ Gymnich, Segão Costa 2006. Harel 2020.


Կերպարանափոխությունը լինելու և թվալու սահմանագծին

Մարդկայինի բնորոշման դիտանկյունից ներքոնշյալ առաձևերը կերպարանափոխության տիրույթում բնորոշում են քաջությունը՝ շեշտադրելով հատկանիշի վերհանումը հասկացության հաշտում.

Tout chien est lion dans sa maison

Շունն իրենց դռանը դռչաղ կլինի:

Քննության առարկա առաձևերում կերպարանափոխությունը՝ նոր կերպարի ստեղծումը, աղերսվում է տարածական ուղղվածությանը, կամ լեզվաճանաչողական կաղապարի հիմքում *ՔԱՋՈՒԹՅՈՒՆԸ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՒՄ Է* հասկացության փոխաբերությունն է: Առաձևերն ընդգծում են տարածության, լայն իմաստով՝ համատեքստի ու ինքնության փոխառնչությունը: Պատճառահետևանքայնության շրջանակում կերպարանափոխության մեկնակետը սեփական տարածքի վերահսկումն է, ինչը լեզվական մակարդակում առկայանում է *dans sa maison, իրենց դռանը* կառույցների միջոցով: Ֆրանսերեն առաձև ընդգծում է գոյաբանական կարգի կերպարանափոխումը, իսկ հայերեն համարժեքում առանցքը հատկանիշի վերագրումն է:



Ինչ վերաբերում է կերպարային անցման շղթային, այն ֆրանսերենում *être* բայի ներկա ժամանակաձևի (*est*) օգնությամբ արտահայտում է ամբողջական կերպարանափոխություն՝ շունը վերածվում է առյուծի: Հատկանշական է, որ առաձևը ստեղծում է «իրավիճակային առյուծ», որի ուժը որոշարկվում է կոնկրետ տարածությունում՝ համատեքստում: Այս տեսանկյունից հատկանիշը դիտարկվում է իբրև ոչ կայուն կարգ, և կենդանուն հասկացության աստիճանակարգումն առկայանում է շան և առյուծի համեմատական շեշտադրմամբ: Մասնավորապես՝ առյուծն ուղղահայաց շղթայի վերևում է, և շան՝ առյուծի վերածվելը՝ քաջության դրսևորման արտահայտությունը կախված է տարածական բաղադրիչից: Հայերեն առաձևը ժամանակային տեսանկյունից *լինել* բայի ապառնի խոնարհմամբ (*կլինի*) ընդգծում է շա-

Շալունց Ն.

նը մարդկային հատկանիշի՝ քաջության վերագրումը (դոչաղ՝ կտրիճ, քաջ, արի, խիզախ):


Այժմ դիտարկենք առածներ, որոնց հիմքում խաբուսիկ արտաքինի լեզվաճանաչողական կաղապարումն է, *ԹՎԱԼԸ ԼԻՆԵԼ ՉԷ*, և ի հակադրություն գոյաբանական տիրույթում կերպարանափոխման հայեցակերպի՝ այս պարագայում քննությունն ուղղորդում է ճանաչողության ու իմացաբանության դաշտ.

La nuit, tous les chats sont gris

Գիշերը կապուն էլ սամուր կերևա

Վախկոկի աչքին կապուն գիշերը դև է երևում:

Վերոնշյալ առածներում կերպարանափոխությունն իրականանում է տեսողական ընկալման ճանաչողության մակարդակում ժամանակի հայեցակերպի շեշտադրմամբ, ուստի *ԸՆԿԱԼԵԼԸ ՏԵՍՆԵԼ Է, ԻՄԱՅՈՒԹՅՈՒՆԸ ԼՈՒՅՍ Է*, իսկ *ԱՆՈՐՈՇՈՒԹՅՈՒՆԸ ԽԱՎԱՐ Է*: Այլ կերպ ասած՝ կերպարի վերակառուցումն արտաքին ազդեցությամբ տեսողական պատկերի պատրանքի արդյունքում կորցնում է իմաստային կառուցցի սահմանները, ինչի ցուցիչը լեզվական մակարդակում ֆրանսերեն առածում կենդանուն գույնի վերագրումն է (*sont gris*), իսկ հայերենում՝ երևալ բայի կիրառությունը լինելովալ հակադրության շրջանակում (*սամուր կերևա, դև է երևում*): Ինչպես մթությունն է քողարկում, շղարշում կենդանու արտաքինը, այնպես էլ մարդկային որակներն ու հատկանիշներն են տարրալուծվում անորոշության մեջ:



Հարկ է նշել նաև, որ մարդկային էությունը և համատեքստային իրադրությունը երկու լեզվամշակույթներում արտահայտվում են միևնույն լեզվական միավորների միջոցով: Մասնավորապես՝ կատուն բնորոշում է մարդուն, իսկ գիշերը՝ անորոշ իրադրությունը: Այնուամենայնիվ, արտաքին ազդեցությամբ ներքին էության թյուրըմբռնումը միջտիրույթային հասկացության դաշտում երևան է գալիս տարբեր հարթություններում: Ֆրանսերեն

Կերպարանափոխությունը առածային խոսույթում...

առածը շեշտադրում է անորոշության պայմաններում մարդկային յուրօրինակությունների անտեսումը. գիշերը բոլոր կատուները մոխրագույն են: Գույնի ըմբռնման լեզվաճանաչողական հայեցակերպը ցույց է տալիս, որ մոխրագույնը սևի ու սպիտակի խառնուրդի, սահմանների անորոշության և այդպիսով մարդկային որակների ու հատկանիշների տարբերակման անհնարինության փոխաբերական արտահայտությունն է: Մինչդեռ հայերեն առաջին առածի առանցքում աստիճանակարգման դիտանկյունից հասարակ կերպարի (կատվի)՝ իբրև ավելի բարձր ու ազնվական (սամուր) *երևալու* իրողությունն է, ընդհանրականից յուրօրինակի թվացյալ անցման իմաստային կառույցը: Ի լրումն վերոնշյալի՝ հայերեն երկրորդ առածն արտակա ընդգծում է մարդկային հատկանիշը՝ *վախկոտ*: Տվյալ պարագայում վախը լույսի բացակայության պայմաններում կատվին վերագրում է գերբնական ուժ՝ դարձնելով թվացյալ դև:

Մարդակենտրոն հայեցակերպի շրջանակում ներքոնշյալ առածները ևս վերհանում են խաբուսիկ արտաքինի, թվալու ու լինելու հակադրամիասնության ճանաչողության առանցքը, և արտաքին ձևի ու ներքին բովանդակության հակադիր պատկերն առածներում առկայանում է հասարակական դիրքավորման հատույթում.


Parez un hérisson, il semblera baron

Գյուղում չկար տանտիկին, էշին արին ուստակին:

Գոյության ձևերի աստիճանակարգումը վերհանում է կերպարանափոխության վերընթաց ուղին, սակայն վերջինս միայն արտաքին դաշտում է, իսկ ներքին էությունն անհաղորդ է մնում ձևական կաղապարին: Մասնավորապես՝ ֆրանսերեն առածում *hérisson* և *baron* գոյականների օգնությամբ շեշտադրվում է զարդարանքի միջոցով ոգնու՝ իբրև բարոն, ազնվական կերպար թվալու արտաքին դրսևորումը, ինչի արտահայտությունը *sembler* բայի կիրառումն է: Այլ կերպ ասած՝ ոգնին ըստ էության, էապես նույնն է, իսկ հասարակական բարձր դիրքի պատճառը՝ զարդարանքը, ուղղորդում է սոսկ թվացյալի տիրույթ: Հայերեն առածում *էշը* մարդկային կերպարանք է ստանում՝ դառնալով *ուստակին*, իսկ պատճառը *տանտիկնոջ* բացակայությունն է (*գյուղում չկար տանտիկին*): Ուստի առածում իրական արժեքի բացակայության պայմաններում այն որոշարկվում է հարաբերականության առանցքում: Համապատասխան որակական չափանիշի բացակայությունը ստեղծում է իրավիճակային կերպարանափոխություն, հիմք դառնում անհամապատաս-

Շալունց Ն.

խան փոխարինման համար, փաստացի կառուցում կերպար՝ արտաքին ազդեցության օգնությամբ (*էշին արին ուստակին*):



Միջմշակության ղիտանկյունը ցույց է տալիս, որ ֆրանսերենում հագուստը վերածնակերպում է ինքնությունը, իսկ հայերենում դրա բացակայությունը վերաբաշխում է գործառույթի բաղադրիչը: Լեզվամշակության իրողությունների համատեքստում հայկական իրականությունում էլը մտազուգորդվում է հիմարության, համառության ու աշխատանքի հետ, իսկ առածը նրան վերագրում է հասարակական հեղինակություն: Ճանաչողական-գործաբանական հարթությունում առաձներն արտահայտում են մարդկային կերպարը միայն արտաքինից դատելու քննադատություն:

Ներքոնշյալ հայերեն առածը *ՀԱՐՄԱՐՎՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԿԵՐՊԱՐԱՆԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ Է* հասկացության փոխաբերության դիրքերից ցուցանում է արտաքին ազդեցության պայմաններում վարքագծի փոփոխության կաղապարը՝ լեզվագործաբանական ղիտանկյունից քննադատելով փոփոխական վարքը:

Ջուր տեսնի, ձուկ կլինի, կապու տեսնի, մուկ կլինի:

Առածում կերպարանափոխությունն իրականանում է գոյաբանական դաշտում՝ սուբյեկտի բնույթի ամբողջական կերպարանափոխությամբ, ինչը լեզվական մակարդակում առկայանում է շարահյուսական զուգահեռություն ոճական հնարի միջոցով (*.... տեսնի, կլինի, տեսնի, կլինի*): Հարկ է ընդգծել, որ վարքագիծը, իսկ լայն իմաստով՝ ինքնությունը, առավել կախված են արտաքին փոփոխականներից, քան ներքին բնույթից: Այս համատեքստում կերպարանափոխության պատճառը տեսողական ընկալման դաշտն է, կամ *ԼԻՆԵԼԸ ՏԵՍՆԵԼ Է*: Տեսողությունը դիտարկվում է ճանաչողական ընկալումից անդին և մտածական մակարդակում առաջ բերում վարքագծի կաղապար՝ այդպիսով ընդլայնելով գործառույթային շրջանակը, քանի որ տեսնելիս մարդը ոչ թե նմանվում է, այլ ինքն է կերպարանափոխվում: Հատկանշական է ենթակայի գեղչման փաստը, ինչն իրողությունները դիտարկում է ոչ թե անձի, այլ վարքագծի կաղապարի մակարդակում: Հենց այդ պատճառով էլ սուբյեկտի ինքնության բացը ստորոգման օգնությամբ

Շալունց Ե.


փոխության. մտազուգորդվելով վտանգի հետ՝ վերջինս ի հայտ է գալիս, երբ տեղի է ունեցել կերպարարանափոխություն:

Qui se fait brebis/agneau, le loup le mange առածում մարդը գոյաբանական տիրույթում կերպարանափոխության արդյունքում գոյության ձևերի շղթայում աստիճանային վայրէջք է ապրում՝ դիրքավորվելով իբրև գառ՝ զոհի ու հպատակի կարգավիճակում, ինչին հետևում է վերջինիս սպառումը գայլի՝ ուժեղի, իշխանության կողմից: Առածի լեզվաճանաչողության իմաստային կառույցի հիմքը *se faire* բայի գործածությունն է, ինչը ենթադրում է պատասխանատվություն՝ սեփական դերի առումով, քանի որ տվյալ պարագայում գործող անձն ինքն է իրավունք վերապահում գայլին գործելու իր բնությանը համապատասխան: Այլ կերպ ասած՝ իբրև գառ *ինքնակամ* դիրքավորումը հանգեցնում է շահագործման, և հարկ է նաև ընդգծել, որ վտանգն արտապատկերվում է հենց դիրքավորվողի վրա, կամ սուբյեկտը վերածվում է օբյեկտի (*le loup le mange*):

Ինչ վերաբերում է *À mal berger qui loup aime* և *Շալի հաշան շունը ոչխարին գել կբերի* առածներին, վերջիններս դիտարկում են *հովվի* և *շան* կերպարանափոխությունը ոչ թե գոյաբանական, այլ հասկացության տիրույթում՝ դերի կերպափոխման համատեքստում: Ի տարբերություն քննության առարկա նախորդ ֆրանսերեն առածի՝ այս առածներն ընդգծում են դերային կերպարանափոխության վտանգավոր ազդեցությունը ոչ թե կերպարանափոխվողի, այլ շրջապատի վրա: Ենթադրելով, որ կերպարանափոխումը տեղի է ունենում էթիկական ինքնության մակարդակում. հովվի, ինչպես նաև շան դերը հոտը պաշտպանելն է, հսկելը, սակայն հովվի պարագայում *գայլին սիրելը*՝ թշնամու հետ գործակցելը, իսկ շան պարագայում *շալի հաշելը*՝ չափից շատ պաշտպանելը՝ վնասելը, վտանգ են հարուցում հոտի համար՝ երաշխավորելով պաշտպանից թշնամի կերպարանափոխությունը: Ֆրանսերեն առածը հնաբան կառույցի օգնությամբ ընդգծում է հովվի էթիկական ծախսողումը (*à mal berger*)՝ գնահատական տալով (*mal (mauvais)*) և սահմանելով վարքագծային կաղապարը (*qui loup aime*), որն առաջ է բերում այդ գնահատականը: Հենց այս իրողությունն էլ հանգեցնում է լեզվաճանաչողության մակարդակում *հովիվ* հասկացության իմաստային կառույցի վերաբանաձևման: Տվյալ պարագայում արտաքին մակարդակում հովիվը իբրև հասկացությամբ հակահովիվ է, քանի որ լեզվական դրսևորման միջոցով սոցիալական դերի վերագրումը աղերս չունի այդ դերի գործառության տրամաբանության հետ: Հարկ է նշել, որ եթե ֆրանսերեն առածում վտանգը ներակա

Կերպարանափոխությունը առաձային խոսույթում...

է, և առկա է միայն հովվի որակումը, ապա հայերեն առաձը պատճառահետևանքայնության համատեքստում ցուցանում է վտանգավոր հետևանքը (*ոչխարին գել կբերի*): Նախապես բարի մտադրությունները առանց չափի զգացողության ու վերահսկողության կարող են փոխակերպվել վնասի: Դերային կերպարանափոխության պատճառը ոչ թե բուն գործողությունն է (*հաչելը*), այլ դրա կատարման չափը (*շարի հաչելը*): Ընդ որում՝ պատճառի լեզվական առկայացումը գործողությունը փոխակերպում է վարքագծի ընդգծմամբ հատկանիշի կաղապարի (*շարի հաչան*):



Այսպիսով՝ կերպարանափոխությունը կենդանական աշխարհի պատկերի օգնությամբ բարոյախրատական դիտանկյունից առաձներում մարդկային էության արտաքին դրսևորման ու ներքին բնույթի փոխհարաբերության, լինելու և թվալու հակադրամիասնության բնորոշման ուղի է, և ինքնության փոփոխությունը՝ լինի գոյաբանական տիրույթում, թե հասկացության դաշտում, հաճախ բացասական հարանշանակության մասին է: Այս առումով առաձային խոսույթն ընդգծում է մարդկային բնույթի, բնատուր էության հաստատուն լինելն ու արտաքին ձևափոխությունների ժամանակավրեպությունը:

Կերպարանափոխության կաղապարի պարզությունն ու բնության հաղթանակը

Առաձային խոսույթում մարդկային բնությունը որոշարկելու լավագույն միջոցը հենց բնությունն է, աշխարհի բնական կերպը կենդանական աշխարհի զուգահեռով: Այս համատեքստում կերպարանափոխության արտաքին դրսևորումը ներքին բնույթի փոփոխության որևէ արդյունքի չի հանգեցնում, այլ կերպ ասած՝ կերպարի փոփոխությունը չի հաջողում ո՛չ լինելու, ո՛չ էլ թվալու մակարդակում, իսկ լեզվաճանաչողական մեկնակետը *ՀԱՏԿԱՆԻՇԸ ԲՆՈՒԿԹՅՈՒՆ Է* հասկացության փոխաբերությունն է:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ նախ դիտարկենք առաձներ, որոնք շեշտադրում են մարդկային էության անփոփոխ բնույթը՝ ի հակադրություն արտաքին ազդեցության:

Շալունց Ն.

Le singe est toujours singe, fût-il déguisé en prince

Un singe vêtu de pourpre est toujours un singe

Serpent qui change de peau est toujours serpent

Ագռավը ինչքան լողանա, դագ չի լինի

Էշին թիմարելով նժույգ չեն դարձնի

Շան պոչը կտրելով անմեղ գառ չի դառնա

Վրադ գառան մորթի ես առել, տակից գազան ես

Վերոնշյալ առածները վերհանում են ֆրանսերենում ու հայերենում ներքին բնույթի լեզվաճանաչողական կաղապարման տարբերությունները: Մասնավորապես՝ ֆրանսերենում լեզվական կառույցը կրկնաբանությունն է (*le singe est toujours singe, un singe ... est toujours un singe, serpent ... est toujours serpent*), և այս դիտանկյունից կապիկը կապիկ է, իսկ օձը՝ օձ՝ չնայած արտաքին ձևավորմանը (*déguisé en prince, vêtu de pourpre, qui change de peau*): Արքայազնի կերպար ստանալը կամ ծիրանի կրելը երբեք չի փոխում կապիկի, իսկ կաշին փոխելը՝ օձի բնույթը: Հատկանշական է *toujours* մակբայի կիրառումը, ինչը ժամանակային ցուցիչի արտահայտություն է, որ ներառում է ժամանակի եռաչափ հարթությունը: Եթե հիմք ընդունենք կրկնաբանության լեզվագործաբանական հայեցակերպը⁸, ապա կարելի է պնդել, որ այս պարագայում ինքնության կրկնակի շեշտումը տալիս է ավելին, քան բառացի կրկնությունը: Ներակա իմաստի շրջանակում կրկնաբանությունը մեկտեղում է կենդանուն բնորոշ բոլոր հատկանիշները, իսկ արտաքին ազդեցության գործողության լեզվական դրսևորումը աստիճանակարգային համեմատության դիտանկյունից առանձնացնում է առանցքայինը: Այսպես, գոյության ձևերի աստիճանակարգում կապիկը արքայազնի ու թագավորի հանդերձանքի միջոցով՝ սնապարծությամբ, փորձում է մարդկային կերպար ստանալ, սակայն ներքին էությունն անհաղորդ է հանդերձանքի փոփոխությանը, ուստի վերջինս մնում է իր աստիճանին՝ ցածրադաս: Օձը, կաշին փոխելով՝ խորամանկելով, մնում է նույն օձը, և այս դեպքում կաշին փոխելը բնորոշում է տարբեր համատեքստերում վարքագծի փոփոխությունը:

⁸ Yule 1996, 31.

Կերպարանափոխությունը առածային խոսույթում...

ցասական հատկանիշների կրողը, և գունային անցումները չեղարկվում են ժխտման միջոցով (*չի փոխի, չի սպիտակի*):

Էության տարածական ուղղվածության բնութագրումը վերլուծենք նաև հետևյալ առածում.

Sous la peau est l'âne

Բառացի ընթերցմամբ՝ կաշվի տակ է էշը: Տարածական ցուցիչը *sous* նախդրի կիրառումն է, սակայն ի տարբերություն նախորդ առածների, որոնցում կաշին բնորոշում է էությունը, այստեղ լայն իմաստով հակադրվում է, քողարկում կենդանու էությունը՝ հիմարությունը, և հանդես գալիս իբրև վարքագծի արտաքին դրսևորում, իսկ մակերեսային տեղորոշումը լեզվական մակարդակում առաջին պլանում է:

Այժմ դիտարկենք մարդկային բնույթի անփոփոխության հարցը բնածին հատկությունների ու էթիկական էության փոխառնչության պրիզմայով.

Jamais un corbeau n'a fait un canari

L'aigle n'engendre pas la colombe

De mauvais corbeau, mauvais œuf

Il n'y a pas de méchant lièvre ne de petit loup

Աղվեսը կորյուն չի բերի

Օձի ձվից հավի ճուրղ դուրս չի գա

Էշից քուռակ կլինի, շնից գառ չի լինի

Էշի քուռակը վերջն էշ կդառնա

Առածները կենդանական աշխարհի պատկերի օգնությամբ փաստում են՝ բնածին հատկանիշները նախանշում են մարդկային էությունը, և այս համատեքստում շեշտադրվում է կենդանիների կենսաբանական շղթան. մի կենդանատեսակը չի կարող վերարտադրել մեկ այլ տեսակ: Ուստի անհատի էությունն ու բարոյական նկարագիրը սահմանափակվում են բնածին հատկանիշներով: Սույն դրույթը՝ մի տեսակից մեկ այլ տեսակի առաջացման բացառումը, առածների լեզվաճանաչողության շրջանակում առկայանում է ժխտման միջոցով (*jamais ... n'a fait, n'engendre pas, il n'y a pas, չի բերի, դուրս չի գա, չի լինի*): Հատկանշական է ֆրանսերեն առածում *jamais* մակբայի կիրառումը, ընդ որում՝ լեզվական կառույցի առաջին պլանում տրամաբանական շեշտի ընդգծմամբ: Այն անցյալ կատարյալ ժամանակաձևի համադրությամբ փաստագրում է ասույթն իբրև անցյալի փորձի հավաստի արդյունք, մինչդեռ սահմանական ներկան, ցուցանելով ընդհանուր ճշմարտություն, առածներում ժամանակային ցուցիչի բացակայության պայմաններ

Շալունց Ն.

րում ընդգծում է հենց կենդանու բնույթը ոչ իբրև փորձի արդյունք, այլ ներհատուկ բնութագրում: Հարկ է ընդգծել, որ *Il n'y a pas de méchant lièvre ne de petit loup* առածում նապաստակն ու գայլը ստանում են բնորոշիչ՝ համապատասխանաբար չար և փոքր, ինչը, սակայն, ժխտվում է, այլ կերպ ասած՝ նապաստակը նապաստակ է, գայլը՝ գայլ: Առաձներում հիշատակված առաջին կենդանին առավելապես բացասական հարանշանակություն ունի, իսկ երկրորդը՝ իբրև ցանկալի արդյունք, դրական: Միջմշակութային առանձնահատկությունների վերհանումը ցույց է տալիս, որ ֆրանսերենում ագռավը չի կարող դեղձանիկ ծնել, արծիվը՝ աղավալի, իսկ հայերենում ընդգծվում է երկրորդ կենդանու ծագը՝ աղվես և կորյուն, օձ և հավի ճուտ, շուն և գառ, էշ և քուռակ: Հատկանշական է նաև պատկանելության լեզվաճանաչողական կառույցի դիտանկյունից *de mauvais corbeau, օձի ձու, հավի ճուտ, էշի քուռակ* կառույցների վերլուծությունը, ըստ որի՝ ծագի էությունը սերում է ծնողից: *De mauvais corbeau, mauvais œuf* և *էշից քուռակ կլինի, շնից գառ չի լինի* առաձներում կիրառվում է ոճական հնար՝ շարահյուսական զուգահեռություն, իսկ վերջինում՝ նաև հակադրություն (*.... կլինի, չի լինի*): Հայերեն առածի լեզվական կառույցի առաջին բաղադրիչը (*էշից քուռակ կլինի*) փաստարկ է երկրորդի (*շնից գառ չի լինի*) ճշմարիտ լինելը հիմնավորելու համար: Ֆրանսերեն առածում բայի զեղչումը արտահայտում է գործողության բացակայությունն ու ժամանակային հայեցակերպի դիտանկյունից անմիջականությունը:

Առաձային խոսույթում բնածին հատկանիշներն արտապատկերվում են նաև վարքագծային կաղապարի վրա, ինչն արտացոլված է ներքոնշյալ առաձներում.

Quiconque est loup agisse en loup

Qui naquit chat court après les souris

La brebis béle toujours d'une même sorte

Շունն իր շնությունը կանի

Խոզն իր խոզությունը չի թողնի

Գայլի միտքը ոչխարի հոտն է

Գելի գլխին ավերարան կարդացին, ասաց՝ շուտ արեք, ոչխարը սարն անց կացավ

Առաձներում կենդանիների վարքագիծը պայմանավորված է բնությամբ, ինչը հասարակական տիրույթում մարդու վարքագծի ու բնության մասին է: Մասնավորապես՝ *agir en loup* բառակապակցության ու կրկնաբանության

Կերպարանափոխությունը առածային խոսույթում...

միջոցով գոյականը՝ գայլը, լեզվական կառույցի շրջանակում փոխադրվում է մակբայի մակարդակ: Շան ու խոզի բացասական վարքագիծն արտահայտվում է ոչ թե գործողության շեշտադրման, այլ գոյականի միջոցով՝ շնություն, խոզություն, ընդ որում՝ բնավորությունը դիտարկվում է իբրև սեփականություն (*իր*): Ուստի կենդանուն գոյականը մտազուգորդվում է ածանցյալ գոյականի հետ, որն ընդգրկում է հատկանիշների ու վարքագծի ամբողջական կաղապարը, իսկ վերջինիս աղերսվող գործողությունն առկայանում է հաստատման կամ ժխտման միջոցով (*agisse en loup, կանի, չի թողնի*): Տվյալ պարագայում առարկայական վարքը նշյալ ածանցյալ գոյականների միջոցով փոխադրվում է բնագանցական տիրույթ՝ ստանալով որակական բնութագրում: Գայլի կերպարը հայերեն առածներում մտազուգորդվում է որսի հետ: *Գայլի միտքը ոչխարի հոտն է* առածը լեզվաճանաչողական կտրվածքով հասկացությային փոխաբերություն է, միջտիրույթային արտապատկերում: գայլը ոչ թե մտածում է ոչխարի մասին, այլ միտքն ամբողջությամբ կլանված է: Մյուս պարագայում գայլն անհաղորդ է խրատին, ներքին բնությունը՝ բնագդը, հաղթում է արտաքին ազդեցությանը՝ բարոյախրատական քարոզին: Արդյունքում գայլը անձնավորում ոճական հնարի միջոցով մարդկային կերպարանք է ստանում, հրամայում (*ասաց՝ շուտ արեք*), քանի որ գայլի միտքը ոչխարի հոտն է: Ինչ վերաբերում է ֆրանսերեն առածներում կատվի ու ոչխարի հասկացությանցմանը, այն առնչվում է ժամանակային հայեցակերպին: *Qui naquit chat* լեզվական կառույցը հարաբերական դերանվան ու անցյալ կատարյալ ժամանակաձևի օգնությամբ շեշտադրում է կատվի ծննդյան անփոփոխ փաստը, ինչին հետևում է ներկա ժամանակաձևով արտահայտված վարքագծի կաղապարը՝ մկների ետևից վազելը (*court après les souris*): Այլ կերպ ասած՝ ներքին բնույթը ներհատուկ վարքագծի տրամաբանական զարգացման պատճառ է, իսկ *toujours* մակբայի կիրառումը ոչխարի մայրցի պարագայում ցուցանում է կրկնությունն ու մշտական բնույթը:

Ներքին բնույթը պայմանավորում է նաև հասարակական դերն ու ընկալումները.

À ne convié à nocés, eau et bois y doit apporter

Էշին կանչեցին հարսանքափուն, ասաց՝ կամ աղն է պակաս, կամ մաղը

Առածների փոխաբերականության հիմքում նույն պատկերն է՝ էշը հարսանիքի արարողության համատեքստում, որտեղ հասարակական դերերը առաջնային չեն, սակայն էշը մնում է իր կարգավիճակում՝ իրադարձությանն

Շալունց Ն.

իր մասնակցությունը դիտարկելով աշխատանքի պրիզմայով և բացառելով իբրև հյուր կերպարանափոխությունը: Երկու առաձեռնի առաջին պլանում էշն է, այնուամենայնիվ, վերջինիս դերային կերպարանափոխության անհնարինությունը լեզվաճանաչողական մակարդակում քննության առարկա լեզվամշակույթներում տարբեր է: Եթե ֆրանսերենում ընդգծվում է պարտավորության հանգամանքը *devoir* բայի միջոցով, ապա հայերենում էշն ինքը գիտի իր անելիքը: Ֆրանսերենում բացակայում է հողը, ինչի արդյունքում կենդանին բնորոշում է ընդհանրական կարգ, իսկ կրավորական սեռի գործածումը՝ հրավիրված հարսանիքի (*convié à nocés*), զրկում է վերջինիս սուբյեկտայնությունից, ինչը վերականգնվում է միայն պարտքը կատարելու պարագայում (*eau et bois y doit apporter*): Հայերենում անձնավորում ոճական հնարի օգնությամբ էշն ինքն է գիտակցում և գիտակցածին խոսքային դրսևորում հաղորդում (*ասաց*):

Ներքոնշյալ առաձեռն ընդգծում է կենդանու վարքի վրա արտաքին ազդեցության արդյունքի բացակայությունը հասարակական տիրույթում մարդու վարքագծի պրիզմայով.

On ne peut pas empêcher les chiens d'aboyer et les menteurs de mentir

Առաձում շարահյուսական զուգահեռության ու զեղչման միջոցով շան հաչելն ու ստախոսի ստելը դիտարկվում են նույն հարթությունում, այլ կերպ՝ կենդանու բնազդային վարքը մտազուգորդվում է մարդու հասարակական ընտրության հետ: Այս պարագայում առաձի երկրորդ բաղադրիչի (*les menteurs de mentir*) հավաստիության ստուգման միջոցը առաջին բաղադրիչն է, որը կենդանու բնազդային վարքի կաղապարն է: Լայն իմաստով հասարակական տիրույթում ստախոսի ստելուն խանգարելը հնարավոր է, սակայն առաձը այն դիտարկում է բնազդի պրիզմայով, ուստի արտաքին ազդեցությամբ խանգարելը ժխտվում է (*on ne peut pas empêcher*), և ասույթն առավել հիմնավոր ու պատկերավոր է դառնում հատկանիշի՝ իբրև կայուն կարգի բնորոշման առումով:

Եզրակացություն

Այսպիսով, կերպարանափոխությունը ֆրանսերեն ու հայերեն առաձային խոսույթում մարդկային էության բնորոշման միջոց է, որի լեզվաճանաչողական քննությունը վերհանում է մարդկային հատկանիշների, լինելու և թվալու, ներքին բնույթի ու արտաքին դրսևորումների փոխառնչության բազմաշերտ համակարգը: Հատկանշական է կերպարանափոխության առկայա-

Կերպարանափոխությունը առածային խոսույթում...

ցումը կենդանուն հասկացությունների միջոցով, և այս պարագայում կենդանական աշխարհի պատկերը բացորոշում է հասարակական համատեքստում մարդկային էության ու վարքագծի կաղապարները, այլ կերպ ասած՝ ՄԱՐԴԻԿ ԿԵՆԴԱՆԻՆԵՐ ԵՆ հասկացության փոխաբերությունը հիմք է կերպարի ստեղծման ու վերստեղծման համար: Հաշվի առնելով հետազոտության արդյունքները՝ հարկ է ընդգծել, որ կերպարանափոխությունը՝ ինքնության փոփոխությունը, առավելապես դիտարկվում է բացասական երանգավորման շրջանակում: Գոյաբանական տիրույթում կամ հասկացության ընկալման մակարդակում պատճառահետևանքայնության ընդգծմամբ կերպարանափոխությունը հակադրվում է ներքին էությանը և աղերսվում խաբուսիկ արտաքինին: Ավելին, ընդգծվում է նաև երևույթի վտանգավոր ազդեցությունը ինչպես ներքին, այնպես էլ արտաքին աշխարհում: Այս դիտանկյունից այն ենթադրում է բարոյախրատական ուղղվածություն և զգուշության հորդոր հղում: Ուստի առաձներն ընդգծում են մարդկային բնատուր էության հաստատուն լինելն ու արտաքին ձևափոխումների պարտությունը: Այս համատեքստում շեշտադրվում են արտաքին ազդեցության ապարդյուն լինելը, բնածին հատկությունների կարևորությունը, ինչպես նաև էության ու վարքագծի փոխառնչությունը:

ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Ղանալանյան Ա. 1960, Առաձանի, Երևան, Հայկական ՍՍՌ ԳԱ հրատարակչություն, 396 էջ: (*Ghanalanyan A. 1960, Aratsani, Yerevan, Haykakan SSR GA hratarakchowntyown, 396 ej*). **Ghanalanyan A.** 1960, *Proverbs, Armenian SSR Academy of Sciences Publishing House, p. 396 (in Armenian)*.

Միրզոյան Վ. 2007, Առաձանին՝ վարքականոն: Երրորդ հրատարակություն, Երևան, «Արտագերս», 224 էջ: (*Mirzoyan V. 2007, Aratsanin varqakanon, Yerrord hratarakowtyown, Yerevan, "Artagers", 224 ej*). **Mirzoyan V.** 2007, *Proverbs as a Code of Conduct, Third Edition, Yerevan, "Artagers," p. 224 (in Armenian)*.

Նազարյան Ա. 1994, Ֆրանսիական առաձներ և ասացվածքներ ոռուերեն և հայերեն թարգմանությամբ ու համարժեքներով, Երևան, Հելիոս հրատարակչություն, 184 էջ: (**Nazaryan A.** 1994, *Fransiakan aratsner yev asacvatsqner rowseren yev hayeren targmanowtyamb ow hamarzheqnerov, Yerevan, Helios hratarakchowtyown, 184 ej*). **Nazaryan A.** 1994, *French Proverbs and Sayings with Russian and Armenian Translations and Equivalents, Yerevan, Helios hratarakchowtyown, p. 184 (in Armenian)*.

Bachelard G. 1939, Lautréamont. Paris: Librairie José C, p. 200

Dictionnaire de proverbes et dictions. 1984, Choisis et présentés par Florence Montreynaud, Agnès Pierron et François Suzzoni, Les usuels du Robert. (*Dictionary of*

Շալոնտ Ն.

Proverbs and Sayings. 1984, Selected and Presented by Florence Montreynaud, Agnès Pierron and François Suzzoni, Les usuels du Robert) (in French).

Gymnich M., Segão Costa A. 2006, Of Humans, Pigs, Fish, and Apes: The Literary Motif of Human-Animal Metamorphosis and its Multiple Functions in Contemporary Fiction. L'Esprit Créateur, Vol. 46, N° 2, Literature and Ecology, Published by: The Johns Hopkins University Press, p. 68–88.

Harel N. 2020, Kafka's Zoopoetics: Beyond the Human-Animal Barrier, University of Michigan Press, 216 p.

Lakoff G., Johnson M. 1980, Metaphors We Live by. Chicago: University of Chicago Press, 242 p.

Le Guern M. 1981, La métamorphose poétique: Essai de définition. Poétiques de la métamorphose par G. Demerson, Saint-Etienne: Publications de l'Université de Saint-Etienne, pp. 27-36. (**Le Guern M.** 1981, Poetic Metamorphosis: An Essay in Definition. Poetics of Metamorphosis by G. Demerson, Saint-Etienne, Publications of the University of Saint-Etienne, pp. 27-36).

Mikkenon K. 1996, Theories of Metamorphosis: From Metatrophe to Textual Revision. In Style Vol. 30, N 2, pp. 309-340.

Refranero multilingüe // <https://cvc.cervantes.es/lengua/refranero/>


Yule G. 1996, Pragmatics. Oxford: Oxford University Press, 138 p.

NARE SHALUNTS

PhD Student

Yerevan State University

nare.shalunts@ysu.am

0000-0003-3606-261X 

METAMORPHOSIS IN PROVERBIAL DISCOURSE: A LINGUOCOGNITIVE CHARACTERIZATION OF HUMAN NATURE

Summary

Within proverbial discourse, the linguocognitive model of metamorphosis reveals how French and Armenian proverbs portray human nature and the cognition of human traits. In this context, human nature and behavioral patterns are analyzed through the prism of animal imagery and conceptual metaphors, and the negative connotations associated with metamorphosis are highlighted. At

Կերպարանափոխությունը առաձային խոսույթում...

the core of this analysis lies the issue of behavioral and, more broadly, identity shifts, analyzed both on an ontological plane and at the level of conceptual perception, at the intersection of being and seeming. Furthermore, the analysis emphasizes the role of causality in the construction of a new identity.

It should be noted that proverbial discourse highlights the immutability of human nature: the external manifestations of metamorphosis do not result in any substantive internal change. From a linguocognitive and linguostylistic perspective, the proverbs under study reveal cognitive models that illustrate the failure of external influence to alter innate attributes, as well as the mapping of human nature onto behavioral patterns.

Keywords: *metamorphosis, proverbial discourse, human nature, zoonym, conceptual metaphor, being, seeming.*